

NASRA SWOT ANALYSIS
ՀՀ ԳԱԱ SWOT Վերլուծություն

Զայցքուրգյան սկզբունքներ	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
<p>1. Դոկտորական /ասպիրանտական/ կրթության հիմնական բաղադրիչ մասը գիտելիքի խթանումն է յուրօրինակ և նորարարական հետազոտության միջոցով: Միաժամանակ դոկտորական /ասպիրանտական/ կրթությունը պետք է համապատասխանի աշխատաշուկայի կարիքներին, որ ավելի լայն է, քան ակադեմիական կարիքները: Կարևոր է, որ դոկտորական կրթության զարգացումը պետք է իր սեփական ուղիով առաջնորդվի և չպետք է գործածի միևնույն գործիքները, ինչ առաջին և երկրորդ փուլերում:</p>	<p>ԳԱԱ-ն կազմակերպում և իրականացնում է հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ, համակարգում հանրապետությունում կատարվող հիմնարար հետազոտությունները: ԳԱԱ-ն Հայաստանի Հանրապետության իշխանության բարձրագույն մարմինների պաշտոնական գիտական խորհրդականն է: ՀՀ ԳԱԱ-ն միավորում է 34-ից ավելի գիտական կազմակերպություններ, հաստատություններ, ձեռնարկություններ և այլ կազմակերպություններ: (ՀՀ ԳԱԱ կանոնադրություն, 2-րդ և 6-րդ հոդված):</p> <p>Բոլոր ասպիրանտական և դոկտորական</p>	<p>Հետազոտության արդյունքների կիրառական նշանակությունը և առաջարկություններ՝ դրանց օգտագործման կամ ներդրման հնարավորության մասով շատ հաճախ մնում են թղթի վրա և կյանքի չեն կոչվում:</p> <p>Որոշ մասնագիտությունների գծով գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բնագավառի առկա նյութատեխնիկական բազան եւ ենթակառուցվածքները սահմանափակում են ժամանակակից գիտության</p>	<p>Պրակտիկա-մասնավոր սեկտոր կապի ամրապնդման միջոցով իրականացնել յուրօրինակ և նորարարական հետազոտություն:</p>	<p>Միջառարկայական մասնագիտությունների դեպքում երբեմն հնարավոր չի լինում բացառել միևնույն գործիքների կիրառումը, որոնք օգտագործվում են բարձրագույն կրթության առաջին և երկրորդ փուլերում:</p> <p>Մասնավոր սեկտորում պրակտիկայի ընթացքում հնարավոր է հետազոտության նորարարական բնույթի տեղեկատվության արտահոսք:</p>

	<p>ատենախոսությունների պարտադիր մասն են հետազոտության գիտական նորույթը, արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը, առաջարկություններ՝ դրանց օգտագործման կամ ներդրման հնարավորության մասին:</p> <p>(ՀՀ ԳԱԱ կանոնադրություն, 2-րդ և 6-րդ հոդված):</p> <p>(ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ, 29-րդ կետ)</p>	<p>պահանջներին համապատասխանող հետազոտությունների իրականացման հնարավորությունները եւ չեն ապահովում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը:</p> <p>Մարքավորումների բացարձակ մեծամասնությունը հնացած է ինչը չի նպաստում բարձր մակարդակի գիտական, հատկապես կիրառական բնույթի հետազոտությունների իրականացմանը:</p>		
<p>2. Ջալցբուրգյան սկզբունքների ներդնումը ԲՈՒՀ-երի ռազմավարությունում և քաղաքականություններում. ԲՈՒՀ-երը պետք է պատասխանատվություն ստանձնեն դոկտորական /ասպիրանտական/ ծրագրերի</p>	<p>Ակադեմիայի հատուկ կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության գիտական քաղաքականության մշակման, իրականացման և գիտության կառավարման ոլորտում սահմանված են «Հայաստանի</p>	<p>Ջալցբուրգյան սկզբունքների արդյունավետ կիրարկմանը կարող են խոչընդոտել ներպետական նորմատիվային, փաստաթղթային և օրենսդրական հենքերը:</p>	<p>Կառավարության մակարդակով օրենսդրական նախաձեռնությունների տեսքով փոփոխել և լրամշակել համապատասխան նորմատիվային, փաստաթղթային և օրենսդրական հենքերը:</p>	<p>Ջալցբուրգյան սկզբունքների ֆորմալ տեղայնացում՝ առանց բոլոր շահեկիցների ներգրավման և պատշաճ քննարկման:</p>

<p>համապատասխան մշակման համար՝ նոր մարտահրավերներին՝ դիմակայելու համար՝ ներառելով համապատասխան հնարավորություններ մասնագիտական կարիերայի զարգացման հնարավորությունների համար: Դոկտորական /ասպիրանտական/ կրթության նպատակն է ստեղծել միջավայր, որը նպաստում է անհատի զարգացմանը և չի ստեղծում միանմանություն կամ կանխատեսելիություն:</p>	<p>Հանրապետության գիտությունների ակադեմիայի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով: (ՀՀ ԳԱԱ կանոնադրություն, 19-րդ հոդված)</p>			
<p>3. Բազմազանության կարևորությունը. Եվրոպայում դոկտորական ծրագրերի բազմազանությունը՝ ներառյալ համատեղ դոկտորական ծրագրերը, այն ուժն են, որոնք պետք է ամրապնդվեն որակի և</p>	<p>ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունները ունեն լաբորատորիաներ, իսկ որոշ գիտական կազմակերպություններ ունեն փորձարարական գործարաններ, փորձակայաններ, հատուկ կոնստրուկտորական բյուրոներ, բուսաբանական այգիներ և այլն, որտեղ</p>	<p>Միջառարկայական ուղղվածության հետազոտությունների դեպքում երկու գիտական ղեկավարների նշանակման նորմատիվային կանոնակարգում ը հստակ չէ:</p>	<p>Համագործակցություն բիզնես ձեռնարկությունների հետ, ուղեղների ցիրկուլացիա</p>	<p>Ուղեղների արտահոսք</p>

<p>հիմնավոր պրակտիկայի միջոցով: Կառույցները պետք է ստեղծվեն կառավարման համապատասխան մակարդակում և չպետք է պարտադրվեն ուսումնական հաստատությանը:</p>	<p>ասպիրանտները կարող են պատշաճ մակարդակով իրականացնել իրենց ատենախոսության հետազոտա-գործնական կամ հետազոտա-փորձարարական մասը:</p>	<p>Որոշ մասնագիտությունների գծով գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բնագավառի առկա նյութատեխնիկական բազան եւ ենթակառուցվածքները սահմանափակում են ժամանակակից գիտության պահանջներին համապատասխանող հետազոտությունների իրականացման հնարավորությունները:</p>		
<p>4. Դոկտորական ծրագրի թեկնածուները որպես սկսնակ հետազոտողներ. Դոկտորական աստիճան հայցողներին անհրաժեշտ է ճանաչել որպես մասնագետներ</p>	<p>ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների մեծամասնությունը ասպիրանտներին իրենց ուսումնառության սկզբում ընդունում է աշխատանքի որպես գիտաշխատող համապատասխան</p>	<p>Գիտաշխատողների ցածր աշխատավարձը արգելք է հանդիսանում երիտասարդ կադրերի ներգրավման համար:</p>	<p>Ստեղծել համապատասխան պայմաններ և ֆինանսավորում գիտական գործունեություն ծավալելու համար:</p>	<p>Հետաքրքրվածության պակաս, ուղեղների արտահոսք:</p>

<p>համապատասխան իրավունքներով, որոնք մեծ ներդրում ունեն նոր գիտելիքի ստեղծման գործում:</p>	<p>իրավունքներով և պարտականություններով՝ հնարավորություն ընձեռնելով ինտեգրվել գիտական կազմակերպության բնականոն գործունեությանը:</p>			
<p>5. Ղեկավարման և գնահատման վճռորոշ դերը. յուրաքանչյուր դոկտորանտի նկատմամբ իրականացվող ղեկավարման և գնահատման գործընթացը պետք է հիմնվի թափանցիկ պայմանագրային համաձայնության վրա, որի իրականացման պատասխանատվությունը կլիսվում է դոկտորանտի, նրա ղեկավարի և համալսարանի (և այլ գործընկերների) միջև:</p>	<p>Առկա է կառավարության կողմից հաստատված օրինակելի պայմանագրի ձևը, որը կնքվում է ասպիրանտուրայի դիմորդների և գիտական կազմակերպության ղեկավարի միջև և սահմանում է կողմերի իրավունքները և պարտականությունները, ասպիրանտի աշխատանքային պլանը, առեստավորման ընթացակարգը: (Հավելված N 1 ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի N 581-Ն որոշման)</p>	<p>Տվյալ օրինակելի ձևը չի կնքվում դիմորդի, գիտական ղեկավարի և գիտական կազմակերպության միջև և չի կանոնակարգում մտավոր սեփականության իրավունքները կամ արդյունաբերական սեփականության իրավունքները</p>	<p>Լրամշակել օրինակելի պայմանագրի նմուշը, դարձնել այն եռակողմ և ներառել ասպիրանտի և գիտական ղեկավարի հեղինակային իրավունքները կանոնակարգող դրույթներ</p> <p>Բարեփոխել մտավոր սեփականության կառավարման բնագավառը, որոք միտված կլինեն մտավոր գործունեությունից ստացված արդյունքների պաշտպանությանը եւ Հայաստանում ու արտերկրում դրանց իրացմանը: (Հավելված ՀՀ</p>	<ul style="list-style-type: none"> Գյուտերի, հայտնագործությունների դեպքում թիմային աշխատանք կատարելիս դժվար է հստակեցնել աշխատանքի ճիշտ համամասնությունը:

			կառավարության 2014թ. մարտի 27-ի № 442-Ն որոշման, ՀՀ 2014-2025 հեռանկարային զարգացման ռազմավարական պլան)	
<p>6. Սահմանային զանգված. Սահմանային զանգված ասելով հասկանում ենք ոչ թե հետազոտողների մեծ թիվ, այլ հետազոտության որակ: Դոկտորական ծրագրերը պետք է նպատակաուղղված լինեն սահմանային զանգված ունենալուն և ուշադրություն դարձնեն նորարարական պրակտիկայի բազմազան տեսակներին, միննույն ժամանակ հիշելով, որ տարբեր համատեքստերում հնարավոր են տարբեր լուծումներ՝ մասնավորապես Եվրոպայի մեծ և փոքր համալսարաններում՝ ներառելով առանցքային</p>	<p>ՀՀ ԳԱԱ հիմնական խնդիրն է ֆիզիկամաթեմատիկական, բնական, տեխնիկական գիտությունների հայագիտական և հասարակական գիտությունների, կարևորագույն ուղղություններով հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների և մշակումների կազմակերպումը և համակարգումը, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության միջոցով:</p> <p>(ՀՀ ԳԱԱ կանոնադրություն, 29-րդ հոդված)</p>	<p>Որոշ մասնագիտությունների գծով դիտարկվում է հետաքրքրության նվազում և հետևաբար ուսանողների թվի անկում՝ ստեղծելով գիտական սերնդափոխության խնդիր:</p>	<p>Տրամադրել պետական ֆինանսավորում և համապատասխան նյութատեխնիկական պայմաններ տվյալ մասնագիտությունների գծով սահմանային զանգված ապահովելու նպատակով:</p> <p>Ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ եւ իրակա նացնել գիտական ներուժի կառավարելի սահուն սերնդափոխություն:</p> <p>(Հավելված ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի № 442-Ն որոշման, ՀՀ 2014-2025 հեռանկարային զարգացման ռազմավարական պլան)</p>	<p>Լիարժեք չի կարող կիրառվել անհատական ղեկավարման սկզբունքը յուրաքանչյուր ասպիրանտի դեպքում՝ հաշվի առնելով գիտական ղեկավարի ծանրաբեռնվածությունը և գիտական կազմակերպությունում սահմանափակ թվով աշխատողների առկայությունը:</p>

<p>համալսարանների միջազգային, ազգային և տարածաշրջանային համագործակցությունը:</p>	<p>ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան գործում է 1943թ-ից՝ այսինքն ՀՀ ԳԱԱ հիմնադրման պահից և ներկայումս առաջարկում է ասպիրանտական կրթություն առավել քան 55 մասնագիտությունների գծով: Ներկայումս ՀՀ ԳԱԱ ասպիրանտների թվերը հետևյալն են՝ Ասպիրանտ /առկա հեռակա / - 154 Հայցորդ – 362 Օտարերկրյա ասպիրանտ – 51 (ՀՀ ԳԱԱ, Հաշվետվություն գիտական և գիտակազմակերպական գործունեության 2012թ. Հիմնական արդյունքներ)</p>			
<p>7. Տնողություն. Դոկտորական ծրագրերը պետք է իրականացվեն նպատակահարմար ժամանակահատվածում (որպես կանոն առկա ուսուցման համար երեքից չորս տարի)</p>	<p>Նորմատիվային փաստաթղթերով սահմանված է ասպիրանտների ուսումնառության ժամկետը հետևյալ կերպ՝ Առկա – երեք տարի Հեռակա – չորս տարի Հայցորդ – հինգ տարի (ՀՀ –ում</p>	<p>Կրեդիտային համակարգի ներդրման պատճառով նվազել է բուն հետազոտության վրա ծախսվող ժամանակը և իրականում առկա համակարգում ուսանող ասպիրանտները ստիպված են իրենց հետազոտությունը</p>	<p>Թեթևացնել ասպիրանտական կրթության կրեդիտային ծանրաբեռնվածությունը՝ թողնելով միայն կամընտրական առարկաներ ընդհանուր կրթական պատրաստվածության մասից և պարտադիր կրեդիտատար</p>	<p>Որոշ մասնագիտությունների գծով /օր.՝ հնագիտություն/, անհրաժեշտ առավել երկար ժամանակահատված ատենախոսության հետազոտական-գործնական մասը կամ հետազոտական-փորձարարական մասը կատարելու համար:</p>

	ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգ, 10-րդ հոդված)	կատարել երկու տարում:	մասնագիտական դասընթացներ:	
<p>8. Նորարարական կառույցների խթանում. նորարարական կառույցների խթանում միջառարկայական պատրաստվածության և փոխանցելի հմտությունների զարգացում: ԲՈՒՀ-ը պետք է ստեղծի մասնագիտական զարգացման կառույցներ, որոնք վերապատրաստում են անցկացնում փոխանցելի հմտությունների և հետազոտության էթիկայի մասին:</p>	<p>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ընդհանուր պատրաստվածության կրթամասում ներդրել է հետազոտողներին անհրաժեշտ մասնագիտական, փոխանցելի և մանկավարժական գիտելիքների, հմտությունների ուսուցմանը և զարգացմանը միտված դասընթացներ՝ ինչպիսիք են՝ Մանկավարժություն և հոգեբանություն, Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում, Մտավոր սեփականության և պատենտագիտության հիմունքներ և Նախագծերի մշակում և կառավարում դասընթացները:</p> <p>(ՀՀ ԳԱԱ Ասպիրանտուրայի բաժնի գործունեության</p>	<p>Ոչ բոլոր դասընթացներն են համապատասխանում գիտության բոլոր բնագավառներով և կարևորագույն ուղղություններով և հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների կարիքներին: Անհրաժեշտ է հավելյալ /պետական և մասնավոր/ ֆինանսավորում՝ կամընտրական դասընթացների ցանկը ընդլայնելու և բարձրակարգ մասնագետներ ներգրավվելու համար:</p>	<p>Ֆինանսական աջակցության դեպքում հնարավորինս ընդլայնել հետազոտողներին առաջարկվող մասնագիտական, փոխանցելի և մանկավարժական գիտելիքների, հմտությունների ուսուցմանը և զարգացմանը միտված դասընթացների ցանկը՝ կամընտրական սկզբունքով:</p>	<p>Կնվազի բուն հետազոտության վրա անցկացվող ժամանակահատվածը</p>

	<p>կանոնակարգ, 6-րդ բաժին) ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում Հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի) գիտակրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը</p>			
<p>9. Շարժունակության աճ. Դոկտորական ծրագրերը պետք է ապահովեն աշխարհագրական, ինչպես նաև միջառարկայական և միջսեկտորային շարժունակություն և միջազգային համագործակցության հնարավորություն ԲՈՒՀ-երի և այլ գործընկերների համագործակցության շրջանակի սահմաններում:</p>	<p>ՀՀ ԳԱԱ համակարգում գործում է Միջազգային Գիտատեխնոլոգիական ծրագրերի բաժինը, որի հիմնական գործառույթն է միջազգային և եվրոպական գիտական ծրագրերի մասին տեղեկատվության լայն տարածումը և իրազեկվածության բարձրացումը, դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող բոլոր հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրումն և արտասահմանյան գործընկերների փնտրման գործում օժանդակության ցուցաբերումը, ինչպես նաև տեղեկատվական բնույթի միջոցառումների</p>	<p>Համեմատած մարդկային ռեսուրսների պոտենցիալի՝ շարժունակությունը կրթության երրորդ փուլում սահմանափակ է՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով /Ֆինանսական, թեմատիկ, լեզվական արգելքներ/</p>	<p>Համատեղ ասպիրանտական ծրագրերի իրականացում ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների և համապատասխան Եվրոպական ԲՈՒՀ-երի և գիտական հաստատությունների մասնակցությամբ: Միջպետական համաձայնագրերի և պայմանագրերի կնքում՝ նորմատիվային փաստաթղթերի համապատասխան փոփոխմամբ և կրեդիտների փոխանցմամբ:</p>	<p>Համատես ասպիրանտական ծրագրերի ամբողջական իրականացման անհնարինություն՝ նորմատիվային փաստաթղթերի և օրենսդրական հենքի անհամապատասխանության և անհամատեղելության պատճառով: Երկրների ռազմավարական զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող մասնագիտությունների տարբերություն</p>

<p>կազմակերպումը՝ այսպիսով խթանելով աշխարհագրական, ինչպես նաև միջառարկայական և միջսեկտորային շարժունակությունը և միջազգային համագործակցությունը: Ինչպես նաև ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունները հանդիսանում են միջազգային գիտահետազոտական ցանցերի անդամ: ՀՀ ԳԱԱ որոշ գիտական կազմակերպություններ առաջարկում են ասպիրանտական ծրագրեր անգլերեն լեզվով՝ ներգրավվելով օտարերկրյա ասպիրանտների: Ակտիվացել է ԳԱԱ արտասահմանյան անդամների ներգրավվածությունը համատեղ ծրագրերում, այժմ իրականացվում են մոտ 20 համատեղ ծրագրեր (ՀՀ ԳԱԱ, Հաշվետվություն գիտական և գիտակազմակերպական</p>			
--	--	--	--

	<p>գործունեության 2012թ. Հիմնական արդյունքներ)</p>			
<p>10. Համապատասխան ֆինանսավորման ապահովում. Որակյալ դոկտորական ծրագրերի մշակումը և ուսանողների կողմից այն բարեհաջող ավարտելը պահանջում է պատշաճ և կայուն ֆինանսավորում:</p>	<p>Ակադեմիան գործում է պետական կառավարման և ինքնակառավարման սկզբունքների գուգակցմամբ և իրականացնում է հիմնարար և կիրառական հետազոտություններ ֆիզիկամաթեմատիկական, բնական, տեխնիկական, հայագիտական և հասարակական գիտությունների կարևորագույն պրոբլեմների ուղղությամբ, համակարգում է հանրապետությունում պետական բյուջեի միջոցներով իրականացվող հիմնարար հետազոտությունները: (ՀՀ ԳԱԱ կանոնադրություն, 7-րդ կետ) Վճարովի ասպիրանտական համակարգը և հայցորդությունը թույլ են տալիս որոշակի չափով լրացնել պետական ֆինանսավորման չափը:</p>	<p>Պետական ֆինանսավորումը համապատասխան մակարդակով չի իրականացվում: Գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազան մաշված է և թարմացման ու արդիականացման կարիք ունի՝ գիտության և տեխնիկայի առաջընթացին համապատասխան:</p>	<p>Մասնավոր սեկտորի կողմից երկարաժամկետ ներդրումների կատարում, հետազոտության արդյունքների առևտրակայնացում</p>	<p>Երկարաժամկետ ներդրումների առումով մասնավոր սեկտորի մտավախությունները և ռիսկերը:</p>

